

ՔՐԻՍՏՈՍԻԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԻ

ՄԱՍԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվան 6 ռուբ.
Դեպքում համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Маскъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.

Տէլեֆոն № 253.

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լիզուով.

Յայտարարութիւնները համար վճարում են
խրաւրանիւր բառին 2 կոպեկ.

Տէլեֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Ի Տ է Ր հ ա ն գ ու չ ե ա լ

ՍԱՐԳԻՍ ԱԻԱԳՔԱՆԱՅ ԱՂԱՋԱՆԵՆՑԻ

ողբացեալ ծխականների կողմից, վաղը, կիրակի, ամսին 10-ին, կէսօրին, Ջրաշէնի ս.
Աւետեաց եկեղեցում կատարվելու է պատարագ և հոգեհանգիստ:

1—1

Թագուհի Սաղոյեան, Մարիամ և Վառվառէ Գալիզեանները, Նիդի-
սաբէթ Իդատեան և Վառվառէ Սաղոյեան ցաւօր սրտի յայտնելով առաջինը
իր թանգազին օրդու, իսկ միւսները իրանց սիրելի եղբոր

ԱՆԹԵԼՈՑ ՍԱՂՈՑԵԱՆԻ

մահը, խնդրում են ազգականներին և ծանօթներին շնորհ բերել հանգուցեալի յուզարկա-
ւորութեան, որ տեղի կունենայ վաղը, կիրակի օր, ամսին 10-ին, առաւօտեան 9 ժամին,
Ղազարեանցի տնից, Պատենակայա (Կիրոսբէ) փողոց № 2, դէպի Կուկիայի թանգուցեան ս.
Աստուածածին եկեղեցին:

1—1

ԲՈՎԱՆԴԱԳՈՒԹԻՒՆ

Համակրելի ծրագիր.—Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ.
Նամակ Բագուհի. Նամակ Կարսից. Նամակ
Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱՅԻՐ-
ՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱ-
ԿԱՆ. Պարսկաստանի բերքեր:

ՀԱՄԱԿՐԵԼԻ ԾՐԱԳԻՐ

Վերջին տարիներում, երբ մեր երկրի
ազգայնականութիւնը սկսեց վնասվել օթե-
րնային թաւանակաւ գանազան պատահարնե-
րից, կարկտից, անձրեւներից, փոթորիկնե-
րից, հեղեղից, բնականաբար շատերի միտ-
քում ծագեց մի հարց՝ թէ արդեօք չէ
կարելի պաշտպանել ազգայնականութիւնը,
ապահովել նրան այդ պատահարներից
այնպէս, ինչպէս ապահովագրվում են տը-
ները հրդեհից: Ապահովագրութեան այդ
տեսակ մի ձև գոյութիւն ունի Ռուսաս-
տանի ներքին նահանգներում միայն կարկ-
տի վերաբերութեամբ, իսկ միւս նոյնօրի-
նակ պատահարները հաշուի չեն առնված:
Այժմ կարող ենք մասնաւոր լինել մի
ուսանելի և հետաքրքիր շարժման վրա,
որ նկատվում է գերմանական ապահովագ-
րական ընկերութիւնների և նոյն իսկ մի-

նիստրական շրջաններում և որի նպատակն
է ընդարձակել ապահովագրութեան ծա-
ւալը, տարածելով ապահովագրութիւնը և
այնպիսի պատահարների վրա, որոնց մա-
սին մենք յիշեցինք: Ներմանական „Haftpf-
lichtschutz Verband“ միութիւնը մշակել է
այդ առիթով մի գեղեցիկ գիրք, որ տպւած
է նրա հրատարակութիւնների IX դրբում:
Ուրիշ արդիւնագործական ընկերութիւն-
ներ ու միութիւններ և առևտրական ա-
տեններ լուրջ կերպով զբաղված են ա-
պահովագրութեան ընդարձակման հոգե-
ւոր և յոյս ունեն շուտով իրագործել ցան-
կալի ապահովագրութեան ծրագրերը:

Ցանկալի է, որ այս խնդրի վերաբերու-
թեամբ Ներմանական արած ջանքերը զը-
րաւէին իրանց վրա յատուկ ուշադրու-
թիւն և օրինակ դառնային մեզ համար
թէ Ներմանական, որտեղ օգնելու յիշաբե-
ական պատահարները համեմատաբար ա-
ւելի մեղմ բնակչութիւնն են կրում, ան-
հրաժեշտութիւն է զգուշ գինովելու նրանց
դէմ ինքնօգնութեան սկզբունքի միջոցով,
ուրեմն որքան աւելի պարտաւորութիւն է
ծանրանում մեզ վրա իրագործելու նոյնը
մեր երկրում, որը իր լեռնային դիրքի և
բազմազան օդերնային թաքսական պայման-
ների շնորհիւ ենթակայ է անթիւ պա-

տահարների ազդեցութեան: Անկարելի է
երևակայել մի այնպիսի տարի, որ մեր
երկրի այս կամ այն տեղը լուրջ կերպով
վնասված չը լինի մրրիկից, փոթորիկից,
հեղեղից, կարկտից և ուրիշ դրանց նման
ազդեցություն:

Մենք պարտաւոր ենք ուշի ուշով հե-
տևել Գերմանիայի պետական և հասարա-
կական հաստատութիւնների արած ջան-
քերին և ծրագրի մշակել ինքնօգնութեան
այս նոր եղանակը իրագործելու մեր երկ-
րում:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

Հոկտեմբերի 5-ին

Այսօր Բագուհի հայ հասարակութիւնը ողբա-
րով հոգին յանձնեց իր արժանաւոր անդամներից
մէկի՝ Գրիգոր Մաղաթեան Ասլանեանցի մա-
րին: Հանգուցեալը երկար տարիների ընթաց-
քում իր համեստ գործունէութեամբ և բարի
սրտով զբաւել էր բոլորի սէրը և յարգանքը, մա-
նաւանդ աղքատ, անտուն ու անտէրերի, որոնք
հանգուցեալի մօտ միշտ գտել են դարձան ի-
րանց ցաւերը բուժելու: Նա դեռ իր պատանե-
կութեան հասակում վաստակել էր «Կապի-բաշի»
մականունը, որը նշանակում է երիտասարդու-
թեան դուռն: Նա, յիշուի, նա իր ընկերների մէջ
միշտ գտնու էր եղբի, շնորհիւ իր բնական խել-
քի, սակայն առանց որ և է տարբարական կըր-
թութեան, իր մաքուր, շիտակ և անկեղծ բը-
նասիրութեամբ և իր բարի ու մարդասիրական
ձգտումներով և զգացմունքներով: Չը կայ Բա-
գուհի մէջ ոչ մի բարեգործական ձեռնարկու-
թիւն, որտեղ հանգուցեալի անունը չը յիշվի,
ուր նա անմիջապէս գործած չը լինի: Նրա ամ-
բողջ գործունէութիւնը սահմանափակվում էր
բաղջածին հայ տաղով, ծառաւին—չուր, մեր-
կին—հագուստ, մի խօսքով աղքատ դասակար-
գի պիտոյները հոգալով: Միթէ մի այնպիսի
ծառայութիւնը, մի այդ տեսակ մարդասիրա-
կան զգացմունքներով սողորմած անձը յար-
գելի չէ:

Հանգուցեալը նիւթապէս այնքան էլ հարուստ
չէր, այնքան այն մտքով, ինչպէս մենք, բագու-
ցիներս, սովոր են հասկանալ: Նա միլիոններ
չունէր, սակայն նրա աշխուհի սիրտը միլիոննե-
րին էր բարձր էր: Միշտ ամեն տարի Մուսկովի
և Ջատիկի տօներին հանգուցեալը փող էր ժո-

ղովում և բաժանում այնպիսի աղքատ ընտա-
նիկներին, որոնց համար մուրացկանութիւնը
անկարելի էր, որոնք պատրաստ են բաղջից
մեռնել, քան մուրացկանութեամբ պարսպվել:
Ահա այնպիսիները իրանց դառն վիճակը, ի-
րանց ցաւերը միմյան հանգուցեալին էին հա-
ղորդում, որովհետև հաստատ գիտէին, որ նա
օգնութիւն կը հասցնէ: Նա այնպիսով, հանգու-
ցեալը հարկաւոր ընտանիքներ էր ապատում
բաղջամահից և մուրացկանութիւնից: Մի խօս-
քով հանգուցեալը աղքատների համար հայր էր,
բառին բուն նշանակութեամբ:

Նա դարձանալի չէ, որ այսօր հանգուցեալի
դագաղը շրջապատել էին աղքատներ և հագա-
րաւոր անկեղծ արցունքներ էին թափում նրանց
աչքերից: Գրիգոր տպւր չը կայ, ինչ պիտի
լինի մեր ճարձ, ասում էին շատ շատերը աղ-
քատներից և աղի արցունք թափում:

Դագաղը դարձաւ մի բազմաթիւ պատկ-
ներով: Աչքի էին ընկնում բաղքալային վարչու-
թիւնից զրաժը (հանգուցեալը ձայնաւոր էր),
Բագուհի հայոց Մարդասիրական ընկերութիւնից,
ուր երկար տարիներ խորհրդի անդամի պաշ-
տոն էր վարել: Պատկերի թիւը հասնում էր
20-ի: Սակայն աչքի էր ընկնում մի այլ փոքրիկ
համեստ պատկ, Բագուհի հայ աղքատներից, ի-
րանց սիրելի Գրիգոր տպուրը: Հանգուցեալի բա-
րեկամներից մի քանիսը փոխանակ պատկ դը-
նելու, որոնք են այդ դուռնը գործադրել աղ-
քատ ուսանողներին օգնելու համար: Սրանք էր,
որ բոլորն էլ այդ բարի օրինակին հետեւէին:

Գրիգոր Ասլանեանցի ծնունդովի վաճառի կը-
տակել է 3,000 ռուբլի, Բագուհի մօտ «Հայոց
թագ» անունով մի փոքրիկ եկեղեցի
կառուցանելու համար 10,000 ռուբլի, իսկ իր
մնացած կայքը իր ընտանիքին և աղքատ բա-
րեկամներին:

Յ. Մարգարեան

ՆԱՄԱԿ ԿԱՐՍԻՑ

Հոկտեմբերի 5-ին

Նրէկ երկրորդան զաղալային կուրբի դահլի-
ճում կայացաւ պարբերական թատրոնական մա-
սով, ի պատիւ յայտնի հրապարակախօս Գ.
Ջանչեանի 25-ամեայ գրական գործունէութեան
յօբելեանին: Նրկու օր առաջ մի խումբ երիտա-
սարդներ ընտրել էին չորս անդամից բաղկա-
ցած մի մասնաժողով, որպէս զի հոգան երե-
կոյթի մասին և որքան կարելի է հետաքրքիր և
արդիւնաւէտ տօնին այդ յիշատակի արժանի

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՐՏԱԿԱՍՏԱՆԻ ԳՐԻԳՐԷՆ

(Նամակ Թարգմանի)

Միջոց Ֆէթաի տան ժողովականները օգոս-
տոսի վերջին, նրա առաջնորդութեամբ, գնում
են դէղերի աղապեան քրդերի ցեղապետ և ներ-
կայումս ամենից հարուստ և աղքատիկ անձնա-
ւորութեան՝ Ղադր-աղայի տունը: Ինչպէս զի-
ղու: Ղադր-աղան ամբողջ նահանգի ամենա-
զօրեղ մարդն է, պարսկներից էլ մարջալի աս-
տիճան է ստացել, Սուլթան-Միւլը տիրադատի:
Ղադր-աղան իր օրդիների հետ միասին հինգ
հազար հրացանակիր և ձիաւոր ունի, որոնք
բոլորը Մարտինի թրքական հրացանով զինված
են: Այս քաղով Միջոց Ֆէթաի ամբողջ քրդը
միջազգայնական ցոյց է տալիս, թէ ինչպէս ինքը
ընդհանուր շահերի համար գնում է իր անձ-
նականը, պատիւ և պահանջի խնդիրները, զի-
ղում է հասարակական բարօրութեան համար
գնալ իր ունեւոր հակառակորդի տունը, որի
հետ ամբողջ տարբ տարի կտրած էր բոլոր յա-
րաբերութիւնները:

Այստեղ կրկնվում է ժողովը և Ղադր-աղան
միանալով նրանց հետ, երդվում են կրկին ան-

գամ բոլորը միասին չը զիջել, մինչև դուռն չը
բերեն իրանց արդար պահանջը: Ինչպէս ինչ
զովականները, Ղադր-աղայի առաջնորդութեամբ
և կնքով, թուղթ են գրում Մէջոյի-խանի օրդուն:
Մէջոյի-ալի խանին (որը նոյնպէս պարսիկ գե-
ներալ լեյտենանտի և Սուլթան Մէջալիք տիտ-
ղոսն ունի), թէ գնալու են նրա մօտ Ղալաթի
Ֆէրիզաթի Մէջոյի-Ալի խանը գիտնալով նը-
րանց ժողովելու նպատակը, պատասխանում է,
—Թէ ինքը պատրաստ է նրանց հիւր ընդու-
նելու, բայց խորհուրդ չի տա իր կալուածքում
ժողով անելու, քանի որ իր քանակից գիւղերը
գտնվում են ռուսահայտակների ձեռքում և
նրանց ներկայացուցիչը հայերը կարող են ժողու-
թի որոշումներից բան իմանալ և տեղեկութիւն-
ներ հասցնել նրանց թշնամիներին:

Մէջոյի-Ալի խանի առաջնորդութեամբ բոլոր
կալուածատէր քրդը խաններ, բէգեր, աղա-
ներ և հաւաքվում են Բոքան, Ազիզ-խան սար-
դարի թուղթ: Մէջալի-խան Սարդարի Միջոցի
տանը: Բոքանում ժողովում են կալուածատէ-
րերի հետ իրանց տոհմակից և ցեղակից բոլոր
ազնուականներին և այդտեղ արդէն կայանում է
ընդհանուր հայտութիւն և միութիւն: Բոքա-
նում խմբագրում են պարսիկ կառավարութեան
ներկայացված ընդհանուր բողոքագրերը և առա-
ջարկութիւնները և այդտեղ վճռում են, որ եթէ
պարսիկ կառավարութիւնը կընդունէ՝ անցնեն
պարսից և թիւրքաց սահմանադրութեան գտնված
թրքական Համդիէի աւանը:

Բոքանից ժողովականների խորհրդով Միջոց
Ֆէթաի նամակ է գրում Քիւրքմալի Նիհա-
րաղալը, 1881 թ. յայտնի արշաւանքներով
հաշակված Մէջոյի-Բագուլուաի եղբոր՝ Մէջոյի-Սաղ-
գին, որ զայ իրանց օգնութեան: Մէջոյի-Սաղգը
պատասխանում է, թէ դուք ինչ էք արել, կամ
ինչ պատրաստութիւն էք տեսել, որ ինձ էլ
կանչում էք: Նոյնպէս դիմել են Մէջոյի-Բագուլու-
աի որդուն՝ Մէջոյի-Մէջալին և նրա աջակցու-
թիւնը խնդրել: Բայց վերջինս էլ խիստ յանդի-
մանական պատասխան է ուղարկել, թէ հօրս
ինչով վարձատրեցիք, նրա արշաւանքին ինչով
նպաստեցիք, նա ինչ կարողացաւ անել, որ ես
գամ ինչ անեմ: Յայտնի է, որ Մէջոյի-Բագուլու-
աի արշաւանքների անհետանք մնալու պատ-
ճառը քրդական իշխանաւորների անմիաբանու-
թիւնն էր:

Բոքանում մի քանի օր մնալուց յետոյ, բոլոր
քրդական կալուածատէրերը, ինչպէս խանաղա, ք-
րդաղալ, մեքեր և գէւուրքի աղայանները, նոյնպէս
մանգուր և գէւուրքի բոլորը իրանց
տոհմակներով և ազգականներով, գնում են Թու-
րիշան: Այժմ Թուրիշանից կալուածատէրեր
հրամաններ են արձակում իրանց հպատակնե-
րին (բայալթ), որ պատրաստութիւն տեսնեն,
ձիերը, զէնքերը միշտ պատրաստ ունենան ա-
նակնկալ կուր դուրս գալու, կամ յարձակու-
ման դրոշմով: Ամբողջ Գրգուտանում մի սարափ է
սփռված. քրդերի սահմանակից չիա և քրիստո-
նէս զիւղացիները և աւանցիները մեծ աւ ու

ղով մէջ են, ամենքի առաջ պատկերանում են
Մէջոյի-Բագուլուաի ստակալի օրբը, արիւնհեղու-
թիւններն ու կողպուտները, հրդեհներն ու ա-
ւերմունքները, և արդէն կարողութիւն ունեցող-
ները աշխատում են, իրանց գլուխը փրկելու
համար, հեռանալ քրդական դաւաճանքից:

Ինչպէս մանրամասն հաշիւներից երևում է,
կալուածատէրերը քանակից հազարի չափ հե-
տեւան և ձիաւոր հրացանակիր կարող են դուրս
բերել, որոնց զէնքերը մեծ մասամբ «այնպիսի»
են (մարտին): Կան նոյնպէս բերդանի, մաու-
զէրի և ուրիշ նորագոյն կատարելագործված
հրացաններ, բայց քիչ թուով, այն ինչ պարսիկ-
ների զինուորները կրում են աւստրիական հին
ստեղծաւոր հրացաններ, որոնցից մեծագոյն մա-
սը փչացած է ու անպէտք: Ինչպէս լսում են,
Թաւրիզում երկու հազար զօրք են պատրաս-
տում այս անպէտք հրացաններից, որ ուղարկ-
վեն պատրաստող քրդերի դէմ: Թէ ինչ կարող
են սրանք անել, Աստուած գիտէ, բայց վտան-
գը սոսկալի է, եթէ մի կերպ խաղաղութիւնով
գործերը չը վերջացնեն պարսիկ պաշտօնականները:

Չարմանալին այն է, որ ներկայումս այն-
պէս նեղ վիճակի մէջ է կառավարութիւնը և
այնքան ճնշված, որ ոչ միայն զօրք չունի պատ-
րաստի, այլ փողի բոլորովին կարօտ է և չէ կա-
րող ոչ մի պատրաստութիւն տեսնել. այնքան
ստոր վիճակի մէջ է, որ յայտնի չաբարգործ
պետութեան դէմ ապստամբ, ըմբոստ, կեղեքող
ձահիւ-խանին, Չէլեքեանիների ցեղապետների

տանը: Պետք է ասել, որ կարգադրել մասնա-
ժողովը, որի անդամներն էին՝ պ. պ. Աշոտ Յով-
հաննիսյան, Յարութիւն Քէրէճեան, Արտաշէս
Լալայան և Համազասպ Նոյրատեան, բաւա-
կան աշխատել էր երեկոյն աւելի աշոյ անե-
լու, բայց նիւթականի կողմից եթէ մի նշանա-
ւոր արդիւնք չը տուէր, դա մեր հարուստների
անհերքելի և զգուշիկ անտարբերութեան շնորհիւ
էր, որոնք կարծես երբէք, բայց իրանց անձնա-
կան շահերից, ոչ մի ձգտումն ու գաղափար
չունեն:

Երեկոյն շատ նպատակներն և Ֆէյէկեան
ընդերը, որոնք մօտ երկու ամիս Կարսում մի
շարք ներկայացումներ տուին և հասարակու-
թեանը գեղարուեստական գոյարածութիւն պատ-
ճառելուց յետոյ շտապում էին հեռանալ Կար-
սից, բայց յարգելով մասնաժողովի խնդիրը,
մնացին և մասնակցեցին այդ երեկոյնին: Օր.
Մարի-Հրանդ, սիրողների մասնակցութեամբ,
խաղաց «Անհայտ» երեկոյ գիւղում և արտա-
սանց «Միւս անգամ» մօնօգոր: Երկուսի մէջ
էլ աշոյ էր և տպաւորիչ: Օր. Վարդիթե-
րը գեղեցիկ առողջանութեամբ և յուզված ու
ողևորված անգիր ասաց «Ժամանա» Գ. Ար-
կից՝ կտորներ. բուռն ծափահարութիւններին և
բեմ կանչելուն վերջ չը կար: Մի քանի անգամ
հասարակութիւնը ստիպեց օրիորդին կրկին
ասանքներ: Լաւ և խորհրդաւոր էին պ. Լալա-
յանի պատրաստած կենդանի պատկերները՝
հայ գիւղացին խաչաքանդի առաջ: Երեկոյնի
սկզբում պ. Նոյրատեանը կարգաց «Մշակ» մէջ
պ. Տ. Յովհաննիսյանի Փրենկից գրած յօդուածը
պ. Ջանշանի մասին, որտեղ կարծի և ամփոփ
կերպով բացատրված էր յարգելի յօդուածի
գործունէութիւնը:

Երեկոյնի տեղեկ մինչև ժամը չորսը և հաս-
արակութիւնը ուրախ տրամադրութեան տակ հե-
ռացան: Յօդուածներն այստեղից ուղարկվեց եր-
կու հեռագիր՝ մէկը Կարսի հայ հասարակու-
թեան, միւսը հայ գաղթականների կողմից, ո-
րոնց բազմաթիւ բերանների օրհնութիւնը նոր
ոյծ և նոր եռանդ պետք է տայ յարգելի հրա-
պարակասին աւելի եռանդով ընթանալու իր
գծած ճանապարհով: Երեկոյնից գոյացած աղ-
ղիւնքը որոշված է դնել յօդուածի տրամադ-
րութեան տակ: Զ.

ՆԱՄԱԿ ԽՐԱԳՐՈՒԹԵԱՆ

Բազու, սեպտեմբերի 23-ին

«Մշակ» 168 №-ում խտորէն ըննադատվում
էր մեր մի ան տիպ աշխատութիւնը: Խտայնե-
լով վերապատելի Մէնէլիշեանի եզրակացու-
թիւնները, որոնք թիւրիմացութեան մի դարձա-
նալի օրինակ են ներկայացնում, դուք համեա-
տութեան չափը ճանաչելու մի հիմնարկ դառ-
նէք տալիս մեզ: Թող տուէք, ուրեմն, պ.
խմբագիր, երկտողով պարբերւմ վերապատելի
ըննադատի թիւրիմացութիւնները կէտ առ կէտ:

1) Հայերէնը մենք համարել ենք բարձր սլա-
ւօ-գերմանական լեզուներից նուազային տե-
սակետով: Վերապատելի Մէնէլիշեան, որը կոկոր-
դական և քանակաւ բազմապիսեւ կուտակում
կայ հայ լեզուի մէջ: Եւ այս պատճառով քաղց-
րահանութիւնը շատ կը կրէ: Նոյն կուտակումը
չը կայ արդեօք սլաւօ-գերմանական լեզուների
մէջ և այդ լեզուներից մին է մերինից բարձր:

առաջնորդին Վարդապետի կանչել է, խնդրել է,
որ հինգ հարիւր ձիաւորով գայ և գնայ քրդերի
դէմ: Այն մարդուն, որ հարիւր կառավարչական
ձիաւորներով չը կարողացան բռնել, բերել
պատժելու նրա արած չարագործութիւնների
համար, այժմ նրա օգնութեանն է դիմում թըշ-
ւառ պարսից կառավարութիւնը, որը միայն
անունով է մնացել: Երբ չորս ամիս է, որ
Պանձակի նահանգից դանդաղաւորներ կան և
խնդրում են հիւպատոսարանի միջոցով, որ
Թաւրիզ բերել տան այդ չարագործ Պանձի խա-
նին՝ արած սպանութիւնների և կեղեքումների
մասին ըննութիւն անելու և կորուստները յետ
ստանալու համար, չեն կարողանում բերել տան,
և այսօր նրա օգնութեանն է դիմում պարսիկ
կառավարութիւնը:

Ինչպէս լսում եմ, Արդարիւր շահվածանքի
ցեղակցների առաջնորդին՝ Խորով խանին էլ
կառավարութիւնը մտադրել է բանից հանել և
առաջարկել, որ հինգ հարիւր ձիաւոր հաւաքէ
իր ցեղակիցներից և ընկերանայ Բահմ խանին:
Խորով խանն իր արած չարագործութիւններով
և առաքելութիւններով ոչնչով պակաս չէ Բա-
հմ խանի, մի սխալմունք է պատահել, որ ըն-
կել է պարսիկ աղմկիւնարարների ձանկը և
մի քանի օր առաջ ըսան հազար թուանով չէր
կարողանում ազատութիւն ձեռք բերել, բոլոր
առաջարկները մերժում էր կառավարչապետը,
այն ինչ այժմ վերջինս ինքն է ստիպված նրան
արձակել առանց վարձատրութեան, միայն թէ

անդիմաբնէ, հողանդները, գերմանները, լե-
հերէն, բուլղարները, որոնք Թող փաստօրէն
ցոյց տայ վերապատելի: Վոյնիւտ առաջար-
կութիւն է մերը՝ կոնկրետ էլ հերքում է հար-
կաւոր, և ոչ թէ ընդհանուր բառական տապա-
լում: Մանթի է արդեօք վերապատելուն պ.
Անառեանի յօդուածը, որ երիտասարդ բանա-
ւէրը «Բուրձնական հաշու» ցոյց է տալիս
հայերէնի ներդրանքակութիւնը: Խորով խան
է սակայն, որ հայերէնի դուրեկանութեան մասին
բերելով թեր ու դէմ կարծիքներ, մենք չէինք
համարձակվել մի հաստատուն բան յայտնելու,
ասելով, որ ճիշտ առողջանութիւնը դեռ կաղմա-
կերպված չէ...: Իմ խօսքը նուազայնութեան
մասին է եղել, որ երևան է գալիս միայն երգի
ժամանակ... կարդացէք («Մուրճ»—1897 թ.)
«Հայերէնի նուազայնութիւնը», որ բարեբաղ-
դաբար տպված և հասարակութեանը մատչելի
է և այսօր էլ կը պնդւմ իմ ասածը:

2) «Աւելի զարմանալի է և և վ գրեթե հա-
մար ըսածը, մէկը կամ միւսը պետք է «բողոքո-
վին դադրի գործածելուց»: Ուրեմն պետք է գրել
ւրա («Իրա») ւառել («Բառ») և կամ դավա-
դան, ավարտել... Լեզուն զարգացնել կըլլայ՝
պարզապէս ստիպելով, գործածելով և ոչ անկող
վերահաստիւնները ընելով...»:

«Ջարմանալի է», այո, ձեր տրամաբանա-
կան թախչները հէնց միայն այս երկուսի մէջ,
ուր սկսում էք և և վ գրեթե. երկուսի մէջ յե-
տոյ գիրը դառնում է լեզու, որ պետք է սովոր-
ել... միթէ գիրը լեզու է, միթէ ուղղագրու-
թիւնը գրգռի զարգացում է...»:

Մեր աշխատութեան Բ. գլուխը այսպէս է վեր-
նագրված. «Հայերէնի հնչիւնաբանութիւնը»:
Եւ այդ գլխի մէջ մենք խօսել ենք ոչ թէ «գրեթե»,
այլ և և վ հնչիւնների մասին: Մտապաշ-
տելի գրողները վերապատելի, այն էլ անցողաբար,
յիշելով այդ գրեթե մի մասին ծագած բանական-
ւր տրամաբանական կը լինէր այն ժամանակ,
եթէ մարդ դադարէր և գործածելուց, քանի
որ կենդանի լեզուի մէջ դրան համապատաս-
խան հնչիւն այլ ևս գոյութիւն չունի:—Աս
մի հրաշալիական առաջարկ չէ, ինչպէս որ ներ-
կայացնում է վերապատելին, այլ մի պայմա-
նական կարծիք վէճի հիմնաւորութեան մասին,
որին անմիջապէս յայտնում է հետեւեալ հա-
տուածը:

«Եւ նպատակ է հայտնել հայերէնի
ուղղագրութիւնը շուտաւել և այս կամ
այն կուտակութեանը յարել. ինձ հետաքրքրող
գիրք կամ տառք չէ, այլ բուն հնչիւնը,
ինչպէս որ նա գոյութիւն ունի բուն շրջանը-
ներում և ոչ գրեթեում. մեր յօդուածի համար
կարեւոր է նախանք այն է, որ մենք այսօր մի
հնչիւն ունենք, որ գրվում է երեքմի վ. եր-
բեմն ւ: Այս տողերի կարծեմ հասկանալի լի-
նելու չափ պարզ են: Մեր աշխատութեան նիւթն
ու նպատակը պահանջում է խուսափելով խու-
սափել ուղղագրութեան վէճերից, որ քանիցս
չիշտելով արտայայտել ենք, որ վերապատելին
անուշադիր թողնելով, մեզ վերել անհեթեթու-
թիւններն է վերագրում:

3) Երբ ձեզ համար, վերապատելի, խաղողը
գերադասելի է հաղող ձեկից, դրա մասին մենք
չենք վիճի. սակայն, մեր կողմն է հայ ժո-
ղովորդի միլիոնաւոր բազմութիւնը, որ հա-
ղող է գործածում շարունակ և մի քանի
տասնեակ նմանօրինակ բառերից հաղիւ այդ
մէկը գտած, անդունդներին: Վուք մի և նոյն
ժամանակ լաւաբոյն պապացոյցն էր տալիս
մեր առաջարկին, յայտնելով, որ «բարեմեան
հայերու մէկ մեծ մասը չի կրնար խն հնչել»,
որ նշանակում է թէ այդ հնչիւնը հոգեվարքի
մէջ է... Բնական օրէնքին պետք չէ դիմադրել
այդ ճանաչել և ընդունել: Սակայն երբ դուք ա-
նում էք, թէ են առաջարկում եմ «խաչ» տեղ
հաչ ասել կամ գրել, դա առասպաւր մի անբա-

րեկիզ վարժունք է ձեր կողմից, քանի որ
այդ պիտի բան մենք չենք ասել և,
որքան գիտենք, կենդանի բարբառներում էլ
այդպիսի երեկոյթ գոյութիւն չունի, որ մեր միակ
առաջնորդն է եղել որ և և առաջարկի համար:

4) Շատ վշտացած վերապատելին մեր ասա-
ծից, թէ «բարեկ դրագէտին մէկը արդէն բար-
դել է ձաւ տաւ արաւ օս», որ ամեն բանով
յետ է ձաւ տաւ արաւ օս, և մեր տգի-
տութիւնը ցոյց տալու համար յիշում է, որ դա
1400 տարվայ հնութիւն ունի: Մոռանում է
պատելին այդ բառի կողքին դրած արդէն ւ,
և կամ կարծում է, որ մի առձեռն բառարան
չունենք բառերի հնութիւնի իմաստով... Մեր
նպատակն է եղել սակայն, բառերի տարբերու-
թիւնը տալ, այլ նշանց համեմատական արժէքը
գեղարուեստական, բերականական և արտասա-
նական տեսակետներով: Նի՞ժ Ն. դարուց մեզ
հասած ամեն բանով կատարեալ է թոււմ վե-
րապատելուն, դրա մասին թող հարցնի իր մեծ
միաբանակիցներին:

5) «Ջարմանալի է», որ մենք չենք զանազա-
նում դայեակը մանկաբարձից: Վերապատելին
անշուշտ գիտէ, որ բառերն էլ ունեն իրանց
անհատական կենսը ու էվոլյուցիան. դրա շը-
նորհիւ ասա այսօր, նախնի դայեակը, կենդանի
լեզոււմ նշանակում է մանկաբարձ կամ տառ-
մէր (Neubamme): Հաղիւ թէ դուք կարողանաք
մի աւանակ ցոյց տալ, որ գիտենաք մանկաբարձ
բառը, եւ ձեզ ցոյց կը տամ հարիւր հազարա-
ւոր ռամկիւնք, որոնք դայեակ գործ են ա-
ծում մանկաբարձի մտքով: հարցնէք Ղարս,
Երզրում, Սէլքուսդուր, Արալայիս, Արալ-
բալաք և այլուր: Այդ պատճառով անհ դայեակ
կամ տառմէր գերադասելի է մանկաբարձ բա-
ռից, որ մեռած է արդէն: Մենք խօսում ենք
ներկայի, 19-րդ դարի լեզուի մասին, իսկ դուք,
մտածում եք շարունակ 1400 տարի ետ, այդ է
անա զարհուրելի:

6) Ուրիշ գործը այդպիսի թիւրիմացութեամբ
դատարկեցող տալիս է հայագիտութեան փայ-
լուն օրինակներ էլ: վերապատելին գիտնականը
ծաղրելով մեր թուութիւնը, ծիսախոս վաճառողը
չիտում է ծիսավաճառուութիւն վաճառող...
Դա ինքնին մի պերճախօս օրինակ է հայագի-
տութեան:

Ամփոփելով խօսքը, վերապատելի հայր, պի-
տի նկատեմ, որ ձեր վարժունքը ինձ երևում է
գրական սովորութիւնների էտիկայի դէմ: Ո՞վ է
տեսել, որ մի անտիպ աշխատութիւն հրապա-
րական ընթերցան ենթարկվի. ինչի՞նչ է ե-
րեկոյնի ընթերցան ձեր կամ իմ ասածի ստուգու-
թիւնը, երբ հասարակութիւնը չէ կարող իր
անձնական կարծիք արտայայտել: Այդ պատ-
ճառով ասա այս վէճը ինձ համար վերին աստի-
ճանի անդունդն է: Թող մի քիչ համբերու-
թիւն ունենայիք սպասելու մինչև գործի տպա-
գրվելը, ապա, willkommen, շնորհ անելք ամե-
նախիտ և ամենակծու ըննութեամբ մեզ պատ-
ւելու: Դուք կարծում էիք, որ մի ան տիպ
աշխատութիւն կարող է տապալել գաղութիւն
ունեցող կարգերի հիւքերը, և մեր գրագէտները
դուրսնեք կորցրած պիտի ընդունէին մեր ա-
սածները հաւած իւրի տեղ, եթէ նրանք այնպէս
անհեթեթ են, ինչպէս որ դուք եք ներկայացրել:

Ինչն էր. ձեր այդքան փութկոտութեան
պատճառը, որի արդարացիան համար եւ ոչ մի
բառ չեմ գտնում: Կր. Վանցեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒԻՐԵՐ

Տպագրում ենք պ. Վանցեանի նամակը՝ ad-
diatur et altera pars սկզբունքին հետեւած լի-
նելու համար: Լեզուին վերաբերեալ հարցերի
մէջ մենք պահպանում ենք չեղորոշութիւն, աւե-

ձեռք բերում: Բայց Բահմ-խանի, Խորով-խանի
և Աղա-Մահմադ-Մամաշի վրա ժողովուրդը մեծ
յոյս չունի. սարսափն ընդհանուր է և օրէցօր
աճում է: Կառավարութիւնը որքան էլ աշխա-
տում է ծածկել, թաղցնել այս բոլորը, ժողո-
ւորը աւելի հետապնդելով է. թէ և Սուլէ-Բու-
լաղի և Թաւրիզի մէջ ընդհատված է հեռադրա-
կան լարը քրդերի ձեռքով, բայց լուրերը տա-
րածվում են Ատրպատականի ամեն կողմը:

Իրերի այս վիճակը շատ պարզ յայտնի լինե-
լով Սուլէ-Բուլաղում գտնվող և այնտեղ գործ
ունեցող ռուսապատանդներին, վերջիններս զը-
նաւոր դիմել էին հիւպատոսին և պաշտպանու-
թիւն, ապահովութիւն խնդրել իրանց կենքի և
գոյքի համար: Ինչպէս ասում են, Ատրպատա-
կանի ռուսաց ընդհանուր հիւպատոսը պաշտո-
նական գրութեամբ դիմել է Նիզամի-Սալթի-
նէին և ապահովութիւն պահանջել իր հպատակ-
ների գոյքի և կենքի համար: Մինչև այժմ դեռ
որոշ պատասխան ստացված չէ, անհամբեր բո-
լորն էլ սպասում են նորանոր կարգադրութիւն-
ների:

Հաջի-Միրզա-Միշի-Լաշկերի թէ ինչ ըն-
կացք է բռնել, դեռ ևս գաղտնիք է, բայց
ինչպիսի երևում է, այս գործը սիրով և խաղա-
ղութեամբ վերջացնելու վրա են: Բայց պիտի
զիջանք պարսից կառավարութիւնը քրդերի մը-
լին, այդ դեռ պարզ չէ, թէ և կառավարութեան
զիջումն աւելի հաւանական է թոււմ, քանի որ

լորդ համարելով այն ջանքերը, որ անում են
մեր մէջ այնքան առատ թիւ կազմող քէֆօր-
մասորները, որոնք փոխանակ աշխատելու որ
լեզուն ծաղկէ, հարստանալ, գրովի կանոնե-
րով են ուղղում ընթացք տալ այն բանին, որ
պիտի դարգանայ ժողովրդի միջոցով, ժողովրդի
աշխույժութեամբ: Մի աղքատ, չը կազմակերպ-
ված լեզուի վրա «նուազայնութեան», «ա»-ի և
«վ»-ի վէճեր յարուցանելը մենք ապարդիւն ենք
համարում: Մեր գրական լեզուն իր աղքատիկ
ցնցոտիները չի փոխի, եթէ նրա միջից վերաց-
վի «ա»-ը կամ «վ»-ը. ցնցոտիների տեղ նա չըբը
ծիրաններ չի հագնի, եթէ «խաղող» տեղ «հա-
ղող» սկսենք գրել: Լեզուն հարստութեան, հը-
կունութեան է կարօտ, նա պիտի կարողանայ
արտայայտել, մտաւոր պահանջների գործիք
դառնալ: Յամենայն դէպ, պ. Վանցեանի նա-
մակից մենք վերցնում ենք մեզ համար այն
կողորը, որ ասում է. «Դուք համեստութեան և
չափը ճանաչելու մի հիմնարկ դառ էք տալիս
մեզ: Ուրախ ենք, որ այդպէս է: Այն, այդ
դասը շատ և չափազանց շատ հարկաւոր է մեր
գրական ասպարէզում աշխատողների համար:
Դա առաջին պայմանն է, որ կարող է փոքր ի
շատէ երաշխաւոր լինել, որ մենք մի գործ կա-
տարելու ընդունակութիւն ունենք:

Ինչպէս յայտնի է, Քիֆիւի Հրատարակչական
ընկերութիւնը մտցրել է ներկայ 1899 թուի
նախահաշուի մէջ 1500 ռուբլի այն գումարից,
որ նուիրել է ընկերութեանը մօսկվաքանակ Աւե-
տիք Պողոսեան: Այդ գումարով պէտք է տպվեն
մանկական և ժողովրդական գրքեր: Մեզ հա-
ղորդում են, որ ընկերութիւնը մտադիր է այդ
գումարով հրատարակել մանկական պատկերա-
գրող երեք գիրք, որոնց պատկերները բերված
են Գերմանիայից: Յանկալի է, որ ընկերու-
թիւնը հող տանէր այդ գումարի հաշուին տալ
և ժողովրդական ընթերցանութեան գրքոյնից:

Վովկասի ուսումնարանական շրջանի հոգա-
բարձուի այս օրերս հրատարակած հաշիւից ե-
րևում է, որ 1898 թվ. ընթացքում շրջանին
անմիջապէս ենթակայ բոլոր դպրոցական հաս-
տատութիւնների թիւն եղել է 1669, որոնց մէջ
49 միջնակարգ, 67 ստորին և 1553 մասնաւոր
ու սկզբնական դպրոց: Ուրիշ վարչութիւններին
և միջնակարգ դպրոցներին ենթակայ դպրոցների
թիւն եղել է 1419, որով Վովկասում գտնված
բոլոր դպրոցների ամբողջութիւնը լինում է 3088.
Եթէ հաշուել ինքնիք մասնակրական սկիւթների
մօտ գտնված մաղաքայինները, որոնց թիւը
1890 է, ինչպէս և հիշանելի սինագոգների մօտ
գտնված 38 դպրոցները, այն ժամանակ կը
գտնենք, որ զանազան դպրոցական հաստատու-
թիւնների թիւը 5116 է: Երբնի բոլոր դպրոց-
ներում սովորող աշակերտների թիւն եղել է
առ. 1-ն յունվար 1899—139,768, որից 104,684
տղայ, իսկ 35,084 աղջիկ: Ըստ ազգութեան
աշակերտները բաժանվում են այսպէս. ռուս՝
70,431 (50,4%), վրացի՝ 26,243 (18,8%),
հայ՝ 24,298 (17,4%), թուրք՝ 4619 (3,3%),
լեռնականներ՝ 3949 (2,8%), իշխայ՝ 1558
(1,1%), և զանազան ազգութիւններ՝ 8643
(6,2%):

Ֆինանսական ծայրահեղ անձուկ վիճակումն է
գտնվում ներկայումս Պարսկաստանը: Կառավա-
րութեան սնանկութիւնը արդէն առասպելական
ձև է ստացել: Սուււմ են, ոչ Շահ Քէհրանից
եօթ միւս հեռաւորութեան վրա գտնվող տաք
ջրերը գնալու համար, Սաղազաւոր պարտաւոր-
ված է եղել բանկից Շահի համար 60,000 թու-
մանի փոխառութիւն անել, իր երաշխաւորու-
թեամբ:

Վերջին յոյն-թիւրքական պատերազմից յետոյ
օսմանցիներն իրանց ուշքը դարձրին Պարսկաս-
տանի վրա և Համիդի համարակալան միու-
թեան ցնորներին իրագործման համար թէ ինչ
միջոցների դիմելին Պարսկաստանում, յայտնի է
աշխարհին: Այդ ուղղութեամբ թիւրքերի պաշ-
տօնական և ոչ պաշտօնական ազնիւները ան-
պակաս են Սուլէ-Բուլաղից և Քիւրդտանից:
Մինչև անգամ շատ լուրերը գնում են Մուսուլ
Ուրֆա և ուրիշ կողմեր, թրքական անցագրով
վերադառնում, որպէս զի օսմանեան հովանաւոր-
ութեամբ անկախ վարեն իրանց առեւտրական
գործերը Քիւրդտանում, ազատվեն պարսկական
կեղեքիչ պաշտօնեաների կողողատմաներից: Այս
չփոխանքն աւելի ավերակներին միակրօն հա-
մայքի կապերը և մտքերի փոխանակումները
քրդերի ուղեղում ծնեցրեց դրական օրէնքի
անհրաժեշտութիւնը:

Ա. Ատրպետ

ԻՌՈՒԴԵ-ԺԱՆԵՑԻՐՈՒ Ժամանակագրի գոյությունը
 Սանտոսում ստորագրեց:
 ԿԱՊԵՏՈՒՄՆ: Ինչպես հաղորդում է «Cape Times»-ի հեռագիրը, Մեքսիկայից ստացված արժանահամար տեղեկությունների հիման վրա, չափազանց օրը զրահապատ գնացքը, դեպի Կապի ընթանալու ժամանակ, հանդիպեց 500 բռնիչներին: Վերջիններս ծանր կորուստ ունեցան: Անգլիացիները կողմից սպանվեցին երկու հոգի, վերադարձվեցին 14 մարդ, որոնցից երկուսը ծանր կերպով:

Դանկոի բանակը (Նատալ): Հոկտեմբերի 6-ին բռնիքներ մի քանի զորաբաժիններ, որոնք արևելյան գլխավոր ուղիով Նիկեյտուրից դեպի Դեյնդի էին գնում, անջատվեցին նրանից՝ Գոթենբերգի մոտ բանակ դրած գլխավոր ուղի ճեղքելով:

ՆԻԻՖՈՐՏ: (Կապուչինի): Հոկտեմբերի 5-ին Եսաննիստրոգից եկած ճանապարհորդները հաղորդում են, որ քաղաքը համարեա ընդհատվել էր զատարկվեց: Ամուսի և ուսուստի պաշարների բոլոր պահեստները մի քանի հանքերում յարբույր են գրավված: Շատ անձինք, որոնք վկայական ունեն Նատալում մնալու համար, դիտադրություն ունեն դուրս գալ քաղաքից ուսուստի պաշարները գրավելու պատճառով: Ապա պատմում են թե բռնիքների կառավարությունը պահանջեց, որ հանքերի տեղ Բորենսոն վերադառնայ Տրանսվալ՝ ամբողջ գոյրից զրկվելու սպառնալիքով:

Խմբագիր՝ ԱԼԵԿՍԱՆԴՐ ԲԱՆԴԱՐՈՒՄ
 Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆՆԱՆ
 ԽՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼՆԱՆ

ՅԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԻՖԼԻՍԻ ՆԱԽԾԱՐԻՆԵՐԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԳԻՐՆԵՐԸ

պատիւ ունեն խնդրելու պ.պ. մասնակցողներին՝ շնորհ բերել մասնաւոր խորհրդակցութեան, որ առդի կունենայ կիրակի օր, ամսին 10-ին, առաւօտեան 10 ժամին, Գաղաթային Դուռնայի դահլիճում: 1—1

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆԸ
 Իր ամսագրայ բնակարանից՝ կը տեղափոխվի ձմեռայ բնակարանը, կիրակի օր, ամսին 10-ին: 1—2

Ամսին 10-ին, կիրակի օրը առաւօտեան 11 ժամին Զիզրաշէն Աւետեաց ս. Աստուածածին եկեղեցումը լինելու է նոյն եկեղեցում միաբան հանգուցեալ Սարգիս աւագ քահանայ Աղաթա- նեանցի տեղը՝ նոր քահանայի կամ քահանայ- աջուր ընտրութիւն: Ուստի սրանով հրաւիր- ւում են միմիայն հանգուցեալի ծխականներին՝ ներկայ լինել յիշեալ եկեղեցումը ընտրութեանը մասնակցելու:
 Գործակալ Բ. Մասին Թիֆլիսի՝ 3—3 Գրիգոր քահանայ Մանգալունի

ԹԻՖԼԻՍԻ Գաղաթային Վարչութիւնը յայտնում է ի գիտութիւն ընդհանուրի, որ ներկայ ամսին 18-ին, ժամի 1-ին, Գաղաթային Վարչութեան բնակարանում, տեղի կունենայ աճուրդ, կապալով տալու՝ Վե- րայի, Հալաթարի, Մէյդանի և Դէսսիմոսով- կայա հրապարակների վրա և Սողատսի բազա- րում գտնվող քաղաքային կիւնքերը: Ամեն մի կիւնքի համար առանձին աճուրդ կը լինի:
 Պայմանները կարելի է տեսնել Գաղաթային վարչութեան մէջ ամեն օր, բացի տօն և կիրա- կի օրերից, առաւօտեան 10 ժամից մինչև 3-ը: (6, 10, 17) 2—3

ԹԻՖԼԻՍԻ ԱՅԳԵԳՈՐԾԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ
 Ընդունելութեան քննութիւնները նշանակ- ված են ներկայ հոկտեմբեր ամսին 11-ին և 12-ին: 3—3



26—52
 М. 36,019.

ԹԻՖԼԻՍԻ Հայոց Բարեգործական Ընկերութեան

Վարչութիւնը յայտնում է, որ նախկին Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան գրադարան-ընթերցարանը փակված է և այդ պատճառով խնդրում է բաժանորդներին վերադարձնել իրանց մօտ եղած գրքերը և յետ ստանալ գրաւականները: 2—3

“ՎԻԷՆՆԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ” ԱՂԷՔ. ԽՈՒԴԱՎԵՐԴԵԱՆԻ

Գործիչների Պրոսպեկտի վրա, առաջին դիմադրայի հանդէպ, տուն Գաշուէթի սուրբ Գէորգ եկեղեցու: 2—3

Ստացել ենք մեծ քանակութեամբ աշնան ալիւն և ձմեռ ալիւն սեզօնի համար՝
Տղամարդկանց եւ Երեխաների պատրաստի հագուստներ:

Ստացված է նոյնպէս **ՖՈՐՄԵՆԻՅԵ ԶԻՆՍՆԵՐ**.— զատաստանական, ուսուցական և աշակերտական—կրթական ուսումնարաններին: Առնչալով մեծ քանակութեամբ մատչելիներ, ընդունում ենք նաև ամեն տեսակ պատուէրներ: Գնքը ՎԵՐՋԵՆԱԿԱՆ ԵՆ և անհամեմատ է ծանո: Վերադիր վճարով պահանջողները պէտք է ուղարկեն պատուէրի 1/2 մասը: 11—40



ՄԵՔԵՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ

Կ. ԽԱՏԻՍԵԱՆԻ, Հ. ԿԵԱՆՋՈՒՆՅԵԱՆԻ ԵՒ ԸՆԿ.

ԲԱԳՈՒՄ
ՆՐԱ ԲԱԺԱՆՄՈՒՆԲԸ ԲԻՔԻ-ՅԵՅԲԱԹՈՒՄ
 Սկսել է իր գործունէութիւնը:
ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՊԱՏՈՒԷՐՆԵՐ
 ամեն սխառն մեքենաների և գործիքների, մասնաւորապէս հորի փորելու և նաւթ քանելու համար՝ չողկաթաների, թորիչների, թուփէ դանակների, ձուլածոների մինչև 1000 պուլ, զանազան պղնձէ ձուլածոների և այլն: Գործարանի պահեստում կարելի է գտնել միշտ Բագուի համար հարկաւոր գործիքներ:
 Գործարանի Բիքի-Հէյթաթի բաժանմունքը լայնէն է առնում հորի փորել կապալով Բիքի Հէյթաթում:
 Պատուէրները համար դիմել՝ քաղաքի գրասենյակը (Старо-Полицейская, տուն Արա- ֆիւովի, տէլեֆօն № 749), գործարան. տէլեֆօն № 54, կամ Բիքի-Հէյթաթի բաժան- մունքը՝ տէլեֆօն № 451. (Ե. Տ. Շ.)

ԲԱԳՈՒՄ
 Բացված է ներկայ ուսումնական տարվայ սկզբից
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՊԱՆՍԻՕՆ
ՅԱԿՈՎ 3. ԹԱԴԵՈՍԵԱՆՏԻ
 (Ներսիսեան դպրոցի նախկին հոգաբարձուի)
 Ընկերակցութեամբ ուսուցիչ պ. ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ԳԱԼՍՏԵԱՆԻ
 (քարտուղարի Բագուի հայոց Մարդասիրական ընկերութեան)
 Աշակերտներ ընդունվում են երթևեկ, կրթադիւրսով և գրեթէ թիկ՝ 7 տարեկան հասակից: Դպրոցի նպատակն է պատրաստել երեխաներին կրթական գիմնազիա և բնական դպրոց մտնելու համար: Ուսումը սկսված է սեպտեմբերի 6-ից:
 Պայմաններն իմանալու համար դիմել ուսումնարան՝ Տէլեֆօնայա և Ստանիսլավսկայա փողոցների անկիւն, տուն Եղիազարովի: 3—10

Фабрика карандашей A.W.FABER Основана 1761 г.
 Всѣ произведения этой издавна известной фабрики снабжены утвержденным Правит. фабричным клеймомъ A. W. FABER или A. W. F., или A. B. FABER
 на что во избежание ошибокъ ПРОСИМЪ ОБРАЩАТЬ ВНИМАНИЕ
 4—30 М. 131559

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-ie
 ՖԻՐՄԱՅԻՆ ՆԱԽԱԳԵԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.
 Կանոնաւոր և ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբա- Թը մի անգամ,
 եւ հակառակ՝ Բաթումից Մարսէլ, մտնելով Տրապիզոն, Սամսուն և Պոլիս: Մեկնում է Բաթումից՝ չորեքշաբթի, 13/25 հոկտեմբերի ՄԻՆԳՐԷԼԻԱ չորեքշաբթի, նաւագետ ՇԵԼՏ: Եւ այսպէս շա- րունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ճաշից յետոյ:
 Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են սովորականից պակաս գինով:
 Ամիսը մի անգամ կանոնաւոր հաղորդակցութիւն Բաթումի և Անտվերպէնի մէջ, ընդունե- րով ապրանքներ բոլոր հիւսիսային նաւահանգիստների համար:
 Ապրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակալներին՝
ԲԱԹՈՒՄԻՄ—պ. Վիկտոր դ'Արնոն, Նաբէթ-ժոյայ: ԹԻՖԼԻՍԻՄ—պ. Օ. Գ. Բարեկենդա- նեանին, Սիօնի փող. Թօլափարուլովի և Մայսուրաձէի քարվանսարա: ԲԱԳՈՒ—էդր. Վ. և Ի. Մուլա- ֆեաններին, Նաբերեժնայա փողոց, տուն Կրասնիկովի, № 27: ՆՕՎՕՐՕՍԻՑԿԱ—պ. Մեյլիսոր 10—20 (Ե. Տ. Շ.)

ՅԵՆՏՐԱԿԱՆ-ՏԵԽՆԻԿԱՆ ԲԻՐՈ
Ինժեներ Ն. Բ. Պասսեկի
 Тифлисъ, Михайловская ул. № 116.
 Հասցէն հեռագրի ներքին համար. Тифлис— Пассеку.
 ՏԵԼԵՖՈՆ № 642.
 ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՈՒԹԻՒՆ
 Ուսաց և արտասահմանեան ֆիր- մաների:
 ԲԻՐՈՐ ՅԱՆՁՆ Է ԱՌՆՈՒՄ
 կառուցանել
 Ամեն տեսակ շինութիւններ, գոր- ծարաններ և գործատներ
 ԳԱԶԱ-ՇՈՂԻՒ-ՋՐԱՆՑՔՆԵՐ
 Ամեն տեսակ էլէկտրոտէխնիկան կառուցումներ և սարքեր, այսինքն հեռագրիներ, տէլեֆօններ, լու- սաւորութեան, տրամվայների և ոյ- ժի հաղորդելու հեռաւորութեան վրա:
 ԿԱՆԱԼԻԶԱՑԻԱ, ՎԵՆՏԻԼԱՑԻԱ և ՏԱԳԱՑՈՒՄԸ
 ԴՆՆԵԼ, ԺՈՂՈՎԵԼ և ՍԱՐՔԵԼ
 ամեն տեսակ
 տիւրբիններ, խողովակներ, մեքենա- ներ և ջրհաններ:
 ԿԱՌՈՒՑԱՆԵԼ
 երկաթէ կամ ւուրջներ և տնակներ:
ՏԵՄԵՆՏԻ ՎԱՃԱՌՈՒՄ
 (Ե. Տ. Շ.) 42—100

ԲՐՕԿԱՐԵԻ ԿՕՄՊ. Մօսկվայում
 ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾԱԿԱՆ
ԳԼԻՑԵՐԻՆԵԱՆ ՍԱՊՕՆ
 Գլխիցներին փափկացնող յատկութիւնը այնքան յայտնի է, որ կարելի չունի նորից գովե- րու: Գլխիցները առաւել ՕԳՈՒՏ Է ԿԱՇԻՆ ՓԱՓԿԱՑՆԵԼՈՒ համար:
 Գլխիցներին սապօնը չէ պարունակում իր մէջ ոչ ալկոլիական, ոչ էլ ուրիշ որ և է կծու մասեր, այդ պատճառով էլ նա մարմնին մի առանձին գովութիւն է պատճառում, պահպա- նում է կաշիի փափկութիւնը և աւելացնում է նրա սպիտակութիւնը: Կանանց և երեխաների տուալէտի համար՝ այդ սապօնը կաթնաման և մեծ քանակութեամբ փրփուրը ծառայում է իբրև ամենալաւ միջոց լուացվելու համար:
 Առհասարակ մեր գլխիցներին սապօնը պարտական է իր յատկութեամբ իր մէջ պա- րունակվող մաքրված նիւթերին, որից նա պարտաւորված է իբրև ապացոյց կարող է ծառա- յել այն, որ նա այդպիսի հոշակ է ստացել և ստացել է ժողովրդի առանձին ուշադրութիւնը:
ՋԳՈՑ ԿԵՆԱԼ ՋԵՂՏՈՒՄՆԵՐԻՑ М. 87666